Պատասխանի ետ Մարտիրոս և ասէ, այսուհետեւ չիք հնար խաղաղութեան՝ զի բան մեր առ մեծամեծս անկաւ, եւ եթէ ոչ կանխեցից խնդրել զիրաւունս՝ դատապարտառնեն զիս։ Իսկ Երեմիա ասէ ցնա՝ և ոչ մի ինչ փոյթ է մեծամեծաց դրան վասն մեր և վասն քո, զի չեն նոքա անկեալ զհետ մեր, մեք եմք՝ որք յորդորեմք զնոսա, թէ առէք զինչս մեր։ Մատոյց ապա Երեմիա զթուղթ Ապրոյի առ Մարտիրոս՝ յորում գրեալ էր. «Մունր դնելով համբոյր մատուցանեմ աջոյ վարդապետիդ նուաստ ծառայ քո Ապրո՝ և աղերսանօք աղաչեմ, զի յայսմ գիշերի հաճեացես օթել 'ի յարկս մեր, խօսիլ ինչ առանձին ընդ մեծութեանդ՝ ողջ լեր»։ Իսկ Մարտիրոս ոչ էառ յանձն երթալ, այլ առաքեաց 'ի տեղի իւր զՄոսրով, խմանալ զմիտս Ապրոյի՝ թէ զի՞նչ կամիցի։ Եւ Ապրո յորդորեալ զՄոսրով ասէ, բաւական է՝ որ ինչ եղեւն ցարդ՝ անցեալն էանց, դադարեցարուք այսուհետեւ, և լերուք զհետ խաղաղութեան. զի՞ պնդեալ էք թափել զձեզ յընչից և աղքատանալ, և յայտ արար եւս թէ՝ կատարած այսր ոչ բարւոք ունի վճարիլ։ Իսկ Մոսրով այնպէս եցոյց զանձն՝ որպէս թէ չիցէ 'ի կողմն Մարտիրոսի, և զայլ և այլ պատասխանիս արարեալ մեկնեցաւ անտի։

Այլ Մարտիրոս վարդապետ 'ի նմին իսկ աւուր բողոքեալ 'ի Դուռն Եպարքոսի՝ ետ հանել զեղիազար յատեան, եւ մատոյց 'ի մէջ զդիր ամբաստանութեան նորա։ Բայց Եպարքոսն որ էր 'ի կողմն Ապրոյի՝ փութով վճարեաց ըզդատաստանն. տուեալ է ասէ յԱրքունուստ Եղիազարու հրաման խնամակալութեան Երուսաղէմի, և չէ հնար յետս կոչել. զայս ասացեալ՝ մերժեաց յիւրմէ սատիւ զՄարտիրոս, և 'ի դառնալ նորա 'ի տեղի իւր՝ մեղադիր լինէին նմա բազումք, մինչեւ ցե՞րբ ասեն այդ՝ եւ յորդորէին զնա մի՛ եւս պնդիլ զհետ։

Բայց ոմանք յԱրեւելեայց քաջալերեալ զՄարտիրոս, սկսան նոր խորհուրդ խորհիլ ընդ նմա, եւ ասեն. Աստուածատուր Պատրիարք Երուսաղէմի ծերացեալ է եւ չէ ինչ փոյթ նմա զիշխանութենէ իւրմէ. եկ զքեզ կացուսցուք 'ի տեղի նորա Պատրիարք, և յայնժամ կարասցես իսպառ նուաճել զեղիազար։ Ի հաւանիլ նորա ընդ